# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

Թիվ 10177-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 27-րդ կետի 10-րդ ենթակետով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ**

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ) 2026 թվականի կարիքների համար մեկ անձից գնում կատարելու միջոցով «փոստային առաքման ծառայությունների» («Հատուկ կապ» և «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերություններ) ձեռքբերման նպատակով գնումների պատասխանատու ստորաբաժանումներ սահմանել ՀՀ ՆԳՆ փաստաթղթաշրջանառության ապահովման վարչությանը, ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիային, ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության վարչական գործունեության և բողոքների քննության վարչությանը, ՀՀ ՆԳՆ հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների լիցենզավորման վարչությանը:

2. Հրամանը ծանոթացնել ՀՀ ՆԳՆ իրավասու ծառայողներին և աշխատողներին:

12/18/2025

X

ԱՐԱ ՖԻԴԱՆՅԱՆ

Signed by: FIDANYAN ARA 3108790099

**Ա.ՖԻԴԱՆՅԱՆ**